



Կարպետ Տեր-Շղիայան

ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉՎՆԱՍՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀՆՈՒ

ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի «Մաշտոց» քոլեջի հիմնադիր-տնօրէն Կարպետ Տեր-Շղիայանին հանդիպումը ցին «Ուրարտու» համալսարանում պատահաբար, Հայաստանից մեկնելուց օր առաջ: Բարեւելուն պես, բնականաբար, հետաքրքրություն առաջացավ այցի նպատակի մասին:

- Սա իմ 26-րդ այցն է,- ասաց նա նպատակը՝ աջակցել Ամերիկյան հումանիտար համալսարանի եւ «Ուրարտուի» միջեւ ստեղծվելիք համագործակցությանը: Որպես արդյունք մեր երեւանյան ուսանողները պետք է ստանան ամերիկյան վկայականներ դիպլոմներ, որոնք ճանաչում կունենան ամբողջ աշխարհում: Ուրարտու համագործակցության համար: Այս ուղղությամբ դեռեւս 2 տարի առաջ էինք մտածել: Հավանաբար գիտեք, որ Ամերիկյան հումանիտար համալսարանը հեղեակավոր բուհ է եւ ունի ենթակառուցվածք Լիբանանում, Սիեռա Լեոնեում, Վրաստանում... հիմա էլ Հայաստանում: Ամենուր շրջանակներին տրվում են նույնանուն վկայականներ՝ վավերացված ԱՄՆ-ի կրթության նախարարության կողմից:

- Պարոն Կարպետ, Ձեր նախորդ այցերն ինչո՞վ էին պայմանավորված:

- Առաջին հերթին հայրենիքի հողը շրջով, հետո նոր գործնական հանդիպումներով, կրթական համատեղ ծրագրերի իրականացումով:

«Մաշտոց» քոլեջը եւ «Ուրարտու» համալսարանը 15 տարվա համագործակցության փորձ ունեն: «Ուրարտուի» հարգարժան օնկտոր Սեդրակ Սեդրակյանը, որ հաճախակի լինում էր Լոս-Անջելեսում, ընդունեց իմ առաջարկը Ամերիկյան հումանիտար համալսարանի շուրջ համախմբվելու մասին: Բուհական համախմբության ունեւում պայմանները խիստ են, բայց ոչ կարծրացած: Դրանք կարող են թարմացվել, լրացվել: Իսկ ամբողջացնելու համար կան մեծ պարտավորություններ ու պարտականություններ:

- Բուհական համատեղ ծրագրերի իրականացումը արդյո՞ք չի կարող նպաստել երիտասարդության արտահոսքին:

- Իմ համոզմամբ՝ ոչ: Համալսարանական այս ցանցի ներսում գերակայության խնդիր չկա եւ ոչ էլ այնպիսի ձգողական ուժ կա, որից կարելի է ենթադրել հայ ուսանողների անվերադարձ արտահոսք: Համագործակցության հիմունքներով գործող կառույցում կան գրասենյակներ, որոնք տվյալ երկրի կրթական համակարգից եւ պահանջարկ ներկայացնող մասնագիտություններից ելնելով կազմում եւ տեղերում իրականացնում են համատեղ ուժերով կազմված ծրագրեր: Ուսումնառության ավարտին տրվում է ամերիկյան վկայական, որը շրջանավարտը կարող է ներկայացնել ինչպես աշխատանքի անցնելիս, այնպես էլ ուսումը հետագայում շարունակելու եւ ավելի բարձր տիտղոս ստանալու համար: Նորաստեղծ բուհի առավելությունն այն է, որ այստեղ ընդունվել կարող են ոչ թե նրանք, ովքեր ավարտել են մեկ բուհ, այլ բակալավրի աստիճան ունեցողները: Մեր նպատակը, եթե կուզեք իմանալ, հայրենիքի բարօրությանը նպաստ բերելն է, Հայաստանը բարձրորակ մասնագետներով ապահովելը: Իսկ դա հենց այնպես չի լինում: Որպես ծրագրի անբաժանելի մաս, մենք դաստիարակման խնդիր ենք իրականացնելու, որ երիտասարդը ստույգ անհրաժեշտ կրթություն, իր գիտելիքներն ու կարողությունները կարողանա օգտագործել ոչ թե օտար ափերում, այլ իր հայրենիքում:

- Համագործակցությունը հավանաբար նոր մասնագիտություններ կբերի «Ուրարտու» համալսարան:

- Դա կախված է իրենցից: Ինչ-որ նախընտրի «Ուրարտուն», այն էլ կավելանա մեր ծրագրում: Մասնագիտությունների ընտրությունը դյուրին գործ չէ: Դա պիտի ծառայի մի նպատակի՝ հայրենիքի կարիքներին: Այս տեսակետից Ամերիկյան հումանիտար համալսարանի առավելությունն անհամեմատելի է եւ դրա բացատրությունն այն է, որ նրա համակարգը լրացնող երկրներն ունեն իրարից տարբեր խնդիրներ, տարբեր մասնագիտությունների պահանջարկ: Հայաստանի պարագայում այդ ցանցն արդեն պատրաստ է եւ

Վահե Մեկրեան

Վահե Մեկրեան

առաջիկայում պրոֆեսոր Սեդրակյանը կարող է ամենայն մանրամասնությամբ ներկայացնել հանրությանը:

- Զանի որ Դուք շատ եք օգտագործում հայրենի հող ու ջուր համակացությունը, ուստի հետաքրքիր է իմանալ, թե Դուք ինչ եք մտածում այսօրվա աշխարհաքաղաքական խնդիրների ու Հայաստանի մասին:

- Ես, օրինակ, կողմնակից եմ, որ հռչակագիրը մանրամասնության մեջ քննարկվի, ոչ թե մակերեսորեն եւ այն աղքատիկ լրատվությամբ, ինչ-որ գիտենք բոլորս: Դա ճիշտ է: Հարցեր կան, որոնք չեն հրապարակվում եւ առայժմ ենթակա էլ չեն մասսայական ման: Հասկանալի է: Բայց կան դեպքեր, երբ բանավոր համաձայնություններն ավելի խոսուն են ու կարելոր, քան գրավոր համաձայնագրերը: Եւ ես մտածում եմ, որ որեւէ համաձայնագրի մակերեսային մակարդակով չպետք է քննարկվի: Եթե ներթափանցելու տեղ կա, ուրեմն պետք է տեսնենք բոլոր շերտերը եւ համայնության մեջ առանձնացնենք նրանք, որոնք կարող են ավելացնել մեր գործունեությունը: Իսկ եթե որեւէ համաձայնագիր կամ հռչակագրի ազդի առաջնորդում է զիջումների, ապա մենք վերապահություններ ունենք: Մենք արյան գնով ենք մեր ազգային ինքնությունը պաշտպանել եւ պարտավոր ենք այն պահպանել՝ լինի դա Արցախի հարց, թե ցեղասպանության խնդիր: Մենք պիտի զգույշ լինենք եւ մեկընդմիջտ իմանանք, որ մակերեսային մակարդակով վճիռներ կայացնելը վնասելու է մեր վաղվա օրը: Ցեղասպանության հարցը գիտե՞ք Սփյուռքի դիրքորոշումը: Եթե ցեղասպանությունը հանկուտակ փոխանցվի 2-րդ կամ 3-րդ մակարդակի հարթություն, այս պայմանում օգնած կլինենք միայն մեր դարավոր թշնամուն: Սփյուռքը որպես մեծ դերակատար, եւ Արեւմտյան Հայաստանի ու Կիլիկիայի շրջանի իրավասու, չի կարող լրջությամբ չդիտարկել այս հարցը: Եթե Հայաստանը տարբեր նպատակների, տարբեր շահերի համար ինչ-որ ժամանակահատվածում ցեղասպանության խնդիրը կարող է տեղափոխել նշած մակարդակների վրա, այդ դեպքում խնդիրներ պետք է կանգնի Սփյուռքը:

- Պարոն Կարպիս, առանձին մեկնաբանություններ ինձ հղումներ են, որ Դուք դաշնակցական եք:

- Ոչ: Ես կուսակցական չեմ: Ես համահայկական եմ եւ մտածում եմ որպես հայ մարդ, ով ամեն տարի այցելում է պատմական Հայաստան: Ես ամեն տարի շփվում եմ թուրքերի հետ եւ գրեթե ամեն տարի 50 ժամից ավելի զրույցներ եմ վարում Թուրքիայի մեջ: Երբ լավ եմ ճանաչում նրանց եւ շփումների բավականին փորձ ունենալով, Հանդիպում եմ ունեցել Թուրքիայի վարչապետ Էրդողանի հետ, եւ կարայում, 5 հազար թուրքերի ներկայությամբ ցեղասպանության

մասին դասախոսություն եմ կարդացել, մոտիկից ծանոթ եմ նրանց մտածելակերպին: Մի խոսքով, թուրքական, ադրբեջանական խաղաղ մեր գլխի մեջ չպետք է պայթեն: Եթե Հայաստանն ուզում է տնտեսական բարգավաճում արձանագրել, ապա դրան հասնելու համար այլ ճանապարհ է ընտրելու: Թուրքերը մեծ դիվանագետներ են եւ ինձ թվում է, որ նրանք փորձելու են ամեն ինչ անել, որպեսզի վերականգնության հարցն իջեցնեն 2-րդ կամ 3-րդ մակարդակ:

- Ի՞նչ եք առաջարկում, Դուք սպասելիքներ ունե՞ք ԱՄՆ-ի նախագահի հայանպաստ խոստումներից:

- Մտածելակերպս չի փոխվել: Առաջին խնդիրն այն է, որ Հայաստանը կարողանա տնտեսական ճգնաժամից շուտ եւ առանց մեծ վնասների դուրս գալ, ու երբեք տնտեսական խնդիրները լուծելու համար ազգային շահերին հարվածելով չանցնի:

Ընտրությունների նախաշեմին Օբամայի հնչեցրած հայտարարություններն ու խոստումները չեն կարող չանդրադառնալ Թուրքիայի քաղաքականության վրա: Իմ կարծիքով թուրքերն ահապահված չեն: Ամերիկայի դեմոկրատական կուսակցության թեկնածուն նույնպես արտահայտվեց հայկական խնդրի շուրջ, իհարկե փոքր-ինչ վերապահություններով: Իսկ ընտրություններից հետո արված հայտարարություններն ավելի զորավոր էին եւ ի նպաստ հայերի: Սակայն, եթե խոստումներ պիտի տալ միայն խոստումների համար, ավելի լավ է լռել: Տվյալ դեպքում, ոմանք այն կարծիքին են, որ Օբաման կարող է իր խոստումներում որոշակի նահանջներ ունենալ: Ինքս հակված չեմ նրա խոստումնազանցությանը: Այն, ինչ ասվեց աշխարհի մասշտաբով, դա մի հանգրվան է, որից ոչ միայն կառչել է պետք, այլեւ խելացի օգտվել:

- Փոխզիջումների մասին ինչ կասեք:

- Ես դա չեմ հասկանում: Ի՞նչ ասել է փոխզիջում, ո՞վ է ինչ զիջելու եւ ինչի՞ դիմաց: Թուրքիան, Ադրբեջանը մեզանից խլած քիչ բան չունեն: Հիմա ասում են՝ եկեք նստենք բանակցությունների ու փոխզիջումներ կատարենք: Այս պահին ես դեմ եմ ցեղասպանության ճանաչմանը: Անկեղծ ասած, միշտ եմ այս կերպ մտածել՝ հակառակ շատերի: Եվ գիտե՞ք ինչու: Ասե՛մ: Ցեղասպանությունը պատմական իրողություն է եւ դա պատմականորեն հիմնավորելու կարիք բացարձակ չունի: Եթե Դուք ապրող էակ եք, կա՞ն անհրաժեշտություն, որ մեկը Ձեզ տա հաստատագիր այդ մասին: Հայկական ցեղասպանությունն ինքնին ապրող իրականություն է եւ մենք որեւէ երկրի կամ երկրների կողմից դրա ճանաչման կարիքը չունենք: Եթե խոսում ենք ճանաչման մասին, ուրեմն՝ նշանակում է, որ մեր մեջ կասկած ունենք, տատանվում ենք. եղե՞լ է, թե՞ չի եղել: Այլ բան է դրանից յլտող փոխհատուցման ճանաչումը: Աշխարհը դրա նախադեպ ու-


նի, չէ՞: Հրեաներն ինչպե՞ս վարվեցին... Նրանք իրենց հողի վրա չեն տառապել, իսկ մենք մեր բնօրրանում կոտորվեցինք, մեր երկրից արտաքսվեցինք: Սա՛ է երկու երկրների պատմության մի դրվագ, ամենամեծ տարբերությունը: Ես միշտ եմ ասել, հատուցման մեջ փաստի ճանաչում կա: Մենք տարիներ շարունակ աշխարհով մեզ խոսում ենք ցեղասպանության ճանաչման մասին, բայց հատուցման: Իմ անձնական կարծիքն է՝ սխալ ուղիով ենք գնում: Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերվելիս իր ձեռքի տակ պետք է ունենա հատուցման հետ կապված թղթածրարային մի ամբողջ փաթեթ. քանի՞ եկեղեցի, քանի՞ դպրոց, քանի՞-քանի՞ ընտանիքներ ենք կորցրել... Մենք ունե՞նք նման հաշվառում: Ի վերջո, եթե այդ հանջատեր ենք, իսկ մենք, իրոք, արդարացի պահանջներ ունենալու ենք, ուրեմն պարտավոր ենք մեր պահանջները հստակ ներկայացնել: Դրանք կարող են կայանալ տարբեր հարթություններում՝ բանալի ցային սեղանի շուրջ, ազդեցիկ երկրների ընկերակցությամբ կամ դատական ատյաններում: Հրեաները մեզ օրինակ: Նրանք ինչպե՞ս կարողացան Գերմանիայի նման հզոր պետությանը հասկացնել, որ տալ իրենց մեղքի բաժինը: Հիշում եք, թե դա ինչպես տեղի ունեցավ: Փոխհատուցման ճանապարհով: Փոխհատուցմամբ ամբողջովե՞ց նաեւ ցեղասպանության փաստը:

- **Բայց մի՞թե մենք կարող ենք գնալ այդ նույն ճանապարհով, և ել հիմա, աշխարհաքաղաքական ներկայիս վերադասավորումներ պայմաններում, երբ մեր երկրի նախագահը մի առիթով նույն խոստովանեց, որ մենք անգամ Ղարաբաղի անկախությունը մեր կողմանիորեն չենք կարող ճանաչել, քանի որ թույլ ենք:**

- Համամիտ չեմ: Հայաստանը թույլ չէ եւ Ղարաբաղի անկախությունը ճանաչելու իրավունք ունի: Եթե մենք որեւէ ձեռով վարվում ենք, պետություն կամ անվճռականություն ենք դրսևորում, շատ երկրներ դա կարող են շահարկել եւ ծառայեցնել իրենց նպատակներին: Մենք մեր երկրի տեր ու տիրականներն ենք, մենք ենք որոշելու, որ երկրի ընթացքն ու մեր ժողովրդի ճակատագիրը: Մենք փոքր, բայց հզոր անհատների, հերոսների ու գիտական մտքի երկիր ենք՝ որ կունքում ունենալով մեծ Սփյուռք:

17.12.2008

Վահե Մեկեթյան



Արթուր Մեսյան

ԴԱ ԱՌՆՎԱՋԸ ՀԻՄԱՐՈՒԹՅՈՒՆ Է

Շինհրապարակում դիրքավորված մեխանիզմների հռոդյունը չխանգարեց, որպեսզի Մատենադարանի նոր մասնաշենքի նախագծի գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսյանի հետ ճշտենք մեր հանդիպման տեղն ու ժամը: Ես դեռ չէի ձեւակերպել հարցս, երբ հավաքվածների ներկայությամբ առաջինն ինքը սկսեց.

-Մի բան ասեմ Ձեզ, հայեր, սա երեւի ամենակարելոր բանն ա, էկեք Մատենադարանին մոտենանք որպես ազգային արժեքի, էկեք սխալ չմտածենք, էկեք չփնտրենք, էկեք տարբեր բաներ չհնարենք: Եսօր էստեղ կատարվում ա շատ կարելոր աշխատանք: Եթե որեւէ մեկը կասի, որ Հայաստանի մեջ սրանից ավելի կարելոր կառույց կա, ես անմիջապես կհեռանամ էստեղից: Իմ խնդրանքը մեկն ա, էկեք աջակցենք, ոչ թե խանգարենք Մատենադարանի նոր մասնաշենքի շինարարությանը:

Երեսուն-երեսունհինգ տարվա ճարտարապետի համարում ունեցող Արթուր Մեսյանը, ով կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի նախագծողներից մեկն է, հավատացած եմ, այսպիսի վրդովմունքով չէր դիմի ներկաներին, եթե ինչ-որ բան տեղի ունեցած չլիներ: Զաղաքապետարանի աշխատակիցներից մեկը նկատելով քննախույզ հայացքս, բացեց գաղտնիքը: Հանրային հեռուստա-

Վահե Մեկեթյան